

**ՔԱՂՎԱԾՔ**  
**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 51**

**«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ՀԵՌԱԿԱ ՆԻՍՏԻ**

**ք. Երևան**

**23 ապրիլի, 2021թ.**

**Մասնակցել են՝**

**Տնօրինության անդամներ՝**

- |               |  |
|---------------|--|
| Ա. Բարսեղյան՝ | Տնօրինության նախագահ-Գլխավոր տնօրենի ժ/պ             |
| Գ. Թառումյան՝ | Ֆինանսական գծով տնօրեն-Գլխավոր տնօրենի տեղակալ       |
| Ա. Բարսեղյան՝ | Ռիսկերի կառավարման գծով տնօրեն                       |
| Գ. Սահակյան՝  | Կորպորատիվ և ներդրումային բանկինգի գծով տնօրեն       |
| Գ. Խաչատրյան՝ | Գլխավոր հաշվապահ                                     |
| Ա. Ղազարյան՝  | Տաղանդների կառավարման և ծառայությունների գծով տնօրեն |

Ընդամենը՝ 6 ձայն

Քվորումն ապահովված է:

**ՕՐԱԿԱՐԳԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՐՑ՝«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ ԴՈԼԱՐԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՒ ՆՈՐ ՍԵՐԻԱՅԻ ԴՈԼԱՐԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Ներկայացրեց՝ Գևորգ Մանուկյան**

*Հիմք ընդունելով «Ամերիաբանկ» ՓԲԸ Տնօրենների Խորհրդի 2021թ փետրվարի 5-ի թիվ 01-1/21/01 և Տնօրինության 2021թ. ապրիլի 5-ի թիվ 01/44/21 որոշումները, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 19.03.2021թ. N 1/156Ա որոշմամբ գրանցված պարտավորումների թողարկման Ծրագրային ազդագիրը և ղեկավարվելով «Ամերիաբանկ» ՓԲԸ կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ Տնօրինությունը .*

**Հարցը դրեց քվեարկության՝**

Արման Բարսեղյան՝ կողմ

Գևորգ Թառումյան՝ կողմ

Անդրանիկ Բարսեղյան՝ կողմ

Գագիկ Սահակյան՝ կողմ

Գոհար Խաչատրյան՝ կողմ

Արմինե Ղազարյան՝ չի մասնակցել քվեարկությանը

Ընդամենը՝ կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, չի մասնակցել՝ 1:

**Որոշեց՝ (Որոշում թիվ 01/51/21)**

1. Փոփոխել «Ամերիաբանկ» ՓԲԸ /այսուհետ՝ «Բանկ»/ Տնօրինության 2021թ. ապրիլի 5-ի թիվ 01/44/21 որոշմամբ հաստատված Բանկի կողմից թողարկված դոլարային պարտատոմսերի /այսուհետ՝ «1-ին սերիայի Պարտատոմսեր»/ տեղաբաշխման ավարտի օրը՝ սահմանելով այն ս.թ. ապրիլի 30-ը, նախկինում սահմանված ս.թ. հունիսի 22-ի փոխարեն:

2. Սույն որոշման հիման վրա կատարված փոփոխություններով 1-ին սերիայի Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման վերջնական պայմանների նոր խմբագրությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հրապարակելու օրվա դրությամբ Պարտատոմսեր ձեռք բերած անձանց գրավոր նախաձեռնության և/կամ պահանջի դեպքում հետ գնել վերջիններիս վաճառված 1-ին սերիայի Պարտատոմսերն անվանական արժեքով (ներառյալ փաստացի հետգնման օրվա դրությամբ կուտակված արժեկտրոնային եկամուտը): Սույն կետով սահմանված պահանջը (այսուհետ՝ Հետգնման պահանջ) ներկայացվում է գրավոր՝ համաձայն սույն որոշման հավելված 1-ով և հավելված 2-ով սահմանված ձևերի և 1-ին սերիայի Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման վերջնական պայմանների նոր խմբագրությունը/փոփոխությունները՝ համաձայն հավելված 3-ի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հրապարակելու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ Բանկի կողմից հետգնումն իրականացվելու է պահանջը ներկայացնելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ առանց ներդրողի կողմից որևէ միջնորդավճարների: Հետգնված պարտատոմսերը ենթակա են մարման հետգնման օրը:

3. Հաստատել Բանկի կողմից նոր սերիայի դոլարային պարտատոմսերի /այսուհետ՝ 2-րդ սերիայի Պարտատոմսեր/ թողարկման և տեղաբաշխման պայմանները՝ համաձայն սույն որոշմանը կից ներկայացված հավելված 4-ի /ներառյալ՝ ներքոնշյալ հիմնական պայմանները/.

- **Ծավալը՝** 15 մլն ԱՄՆ դոլար
- **Շրջանառության ժամկետը՝** 27 ամիս
- **Տոկոսադրույքը՝** 4%
- **Արժեկտրոնի պարբերականությունը՝** 3 ամիս
- **Տեղաբաշխման ժամանակահատվածը /սկիզբը և ավարտը/՝** ս.թ. մայիսի 3-ից մինչև ս.թ. հուլիսի 9-ը ներառյալ

1.3.1. Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացնել ֆոնդային բորսայից դուրս՝ հայտ-հանձնարականների լրացման եղանակով և առանց բաժանորդագրության՝ ուղղակի վաճառքի ձևով.

4. **Հանձնարարել Կապիտալի շուկաների բաժնի ղեկավարին՝**

1.4.1. Ապահովել սույն որոշման 1.1 կետով սահմանված վերջնական պայմանների պատշաճ փոփոխության համար անհրաժեշտ բոլոր գործընթացները /ներառյալ՝ հրապարակումը/, ինչպես նաև սույն որոշման 1.2 կետին համապատասխանող պահանջ ստանալու դեպքում՝ պարտատոմսերի հետգնումը՝ ՀՀ օրենսդրությամբ և սույն որոշմամբ սահմանված կարգով և ժամկետներում:

1.4.2. Ապահովել սույն որոշման 1.3 կետով սահմանված Պարտատոմսերի տեղաբաշխման համար անհրաժեշտ կազմակերպչական աշխատանքների իրականացումը՝ հիմք ընդունելով պարտատոմսերի ծրագրային ազդագրով և սույն որոշմամբ հաստատված պայմանները և ժամկետները:

**5. Հանձնարարել Մանրածախ բանկինգի տնօրենին՝**

1.5.1. 1-ին սերիայի Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման վերջնական պայմանների փոփոխված տարբերակը օրենքով սահմանված կարգով հրապարակելու օրվանից սկսած առավելագույնը 3 օրվա ընթացքում Պարտատոմսեր ձեռք բերած անձանց ծանուցել Հետգնման պահանջի հնարավորության մասին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Նախագահի ժ/պ՝

Արման Բարսեղյան

Քարտուղար՝

Նելլի Մանուկյան



Քաղվածքի տրամադրման ամսաթիվ՝ 26.04.2022թ.

**«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲ Ընկերության կողմից թողարկված դոլարային արժեկտրոնային պարտատոմսերի հետզնման պահանջի հայտ**

(իրավաբանական անձանց համար)

Հայտ-հանձնարարականը Բանկ ներկայացման ամսաթիվը և ժամը

2021-04-26 18:34

(օր, ամիս, տարի, ժամ, րոպե)

Իրավաբանական անձի անվանումը

(Ֆիրմային անվանում, կազմակերպաիրավական ձև)

Պետական գրանցման տվյալները

(գրանցման վկայականի համար, ամսաթիվ)

Գտնվելու վայրը

ՀՎՀՀ

Ռեզիդենտությունը

(ՀՀ ռեզիդենտ/ ոչ ՀՀ ռեզիդենտ)

Սույն հայտի ներկայացմամբ դիմում եմ «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ Բանկ)՝ վերջինիս կողմից թողարկված և տեղաբաշխված պարտատոմսերը հետ գնելու պահանջով հետևյալ պայմաններով՝

Հեղձման ենթակա պարտատոմսերի ԱՄՏԾ

AMAMRBBM3ER9

Հեղձման ենթակա պարտատոմսերի քանակը՝ հար

քանակը թվերով

Անձի՝ ԱՄՆ դոլարով բանկային հաշվի համարը

Բանկի անվանումը

Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը

Արժեթղթերի հաշվի համարը

Հավաստում եմ, որ հայտը ներկայացնելուց առաջ, ըստ էության, ծանոթացել եմ Բանկի պարտատոմսերի հրապարակային առաջարկի Ծրագրային Ազդագրին, թողարկման վերջնական պայմաններին, ներառյալ՝ դրանց լրացումներին/փոփոխություններին,

ընդունում և համաձայն եմ պարտատոմսերի հետգնման պայմանների հետ, ստանձնում եմ այդ պարտատոմսերի հետգնման հետ կապված պատասխանատվությունը, պարտականությունները և հնարավոր ռիսկերը:

Հաստատում եմ, որ սույն հայտի բավարարման դեպքում այն կհանդիսանա իմ և Բանկի միջև պատշաճ ձևակերպված և վավեր պայմանագիր՝ Բանկի կողմից թողարկված պարտատոմսերի հետգնման վերաբերյալ:

Ստորագրություն \_\_\_\_\_

Անուն Ազգանուն \_\_\_\_\_

(ստորագրող անձի անուն, ազգանունը)

*Հիշեցում: Սույն հետգնման պահանջի հայտը պետք է գրավոր ներկայացվի Բանկ մինչև \_\_\_\_\_թ.-ի ժամը \_\_\_\_\_: Բանկի կողմից հետգնումն իրականացվելու է հայտը ներկայացնելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում: Պարտադրոմսերը հետ են գնվելու դրանց անվանական արժեքով՝ փաստացի հետգնման օրվա դրությամբ կուտակված արժեկտրոնային եկամուտների հետ միասին:*

**«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲ Ընկերության կողմից թողարկված դոլարային արժեկտրոնային պարտատոմսերի հետզնման պահանջի հայտ (ֆիզիկական անձանց համար)**

Հայտի ներկայացման ամսաթիվը և ժամը	2021-04-26 18:35 (օր, ամիս, տարի, ժամ, րոպե)
Հայտը ներկայացնողի անունը	(անուն, ազգանուն)
Անձը հաստատող փաստաթղթի տվյալներ	(փաստաթղթի համար)
Անձը հաստատող փաստաթղթի տրման ամսաթիվը	(օր, ամիս, տարի)
Գրանցման վայրի հասցեն	
Ռեզիդենտությունը	(<< ռեզիդենտ/ << ոչ ռեզիդենտ)

Սույն հայտի ներկայացմամբ դիմում եմ «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ Բանկ)՝ վերջինիս կողմից թողարկված և տեղաբաշխված պարտատոմսերը հետ գնելու պահանջով հետևյալ պայմաններով՝

Հեղադրման ենթակա պարտատոմսերի ԱՄՏԾ	AMAMRBBM3ER9
Հեղադրման ենթակա պարտատոմսերի քանակը՝ հատ	քանակը թվերով
Անձի ԱՄՆ դոլարով բանկային հաշվի համարը	
Բանկի անվանումը	
Արժեթղթերի հաշիվը հաշվառող անձի անունը	
Արժեթղթերի հաշվի համարը	

Հավաստում եմ, որ հայտը ներկայացնելուց առաջ, ըստ էության, ծանոթացել եմ Բանկի պարտատոմսերի հրապարակային առաջարկի Ծրագրային Ազդագրին, թողարկման

վերջնական պայմաններին, ներառյալ՝ դրանց լրացումներին/փոփոխություններին, ընդունում և համաձայն եմ պարտատոմսերի հետգնման պայմանների հետ, ստանձնում եմ այդ պարտատոմսերի հետգնման հետ կապված պատասխանատվությունը, պարտականությունները և հնարավոր ռիսկերը:

Հաստատում եմ, որ սույն հայտի բավարարման դեպքում այն կհանդիսանա իմ և Բանկի միջև պատշաճ ձևակերպված և վավեր պայմանագիր՝ Բանկի կողմից թողարկված պարտատոմսերի հետգնման վերաբերյալ:

Ստորագրություն

---

Անուն Ազգանուն

---

(ստորագրող անձի անուն, ազգանունը)

*Հիշեցում: Սույն հետգնման պահանջի հայտը պետք է գրավոր ներկայացվի Բանկ մինչև [ ]թ.-ի ժամը [ ]: Բանկի կողմից հետգնումն իրականացվելու է հայտը ներկայացնելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում: Պարտատոմսերը հետ են գնվելու դրանց անվանական արժեքով՝ փաստացի հետգնման օրվա դրությամբ կուտակված արժեկտրոնային եկամուտների հետ միասին:*



Հավելված «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ տնօրինության  
05.04.2021թ. թիվ 01/44/21 և 23.04.2021թ. թիվ 01/51/21 որոշումների

**Թողարկման վերջնական պայմաններ**

23.04.2021թ.

Ամերիաբանկ ՓԲԸ

անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային, ոչ փոխարկելի պարտատոմս

Թողարկողի և թողարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ձեռքբերման համար անհրաժեշտ է համատեղ դիտարկել Ծրագրային ազդագիրը (գրանցված է 19 մարտ 2021թ.), դրա լրացումները և սույն թողարկման վերջնական պայմանները: Ծրագրային ազդագիրը, դրա լրացումները գտնվում են ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ-ում 2 Վ. Սարգսյան փողոց, 0010, Երևան, ՀՀ հասցեում:

<p>Ընդհանուր տեղեկություններ (Այն տեղեկությունները, որոնք կիրառելի չեն, նշվում է «ոչ կիրառելի»: Եթե միևնույն սերիայի ներքո տարբեր հիմնական պայմաններով (թողարկման արժույթ, առաջարկի գին, անվանական արժեք և այլն) արժեթղթեր են թողարկվում, ապա յուրաքանչյուր պայմանին բավարարող արժեթղթերի խմբի համար տարբերվող պայմանները ներկայացվում են տարանջատված:)</p>		
1.	Թողարկողը (թողարկողի անվանումը)	“ԱՄԵՐԻԱԲԱՆԿ” ՓԲԸ
2.	Երաշխավորողը	Թողարկողը չի նախատեսում ներգրավել երաշխավորող:
3.	Սերիան (տվյալ ծրագրային ազդագրի հիման վրա իրականացվող հերթական թողարկման համարը և տարեթիվը)	Սերիա 1, 2021
4.	Տվյալ սերիայի թողարկման ընդհանուր ծավալը	20,000,000 (քսան միլիոն) դոլար Տվյալ տեղաբաշխման ժամանակահատվածում չտեղաբաշխված պարտատոմսերը կարող են տեղաբաշխվել թողարկման վերաբացման միջոցով
5.	Արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն՝ թողարկողի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (ստորադասությունը), ներառյալ՝ տվյալ սերիայի ներքո յուրաքանչյուր թողարկման ծավալը՝ ըստ ստորադասության	Պարտատոմսերը ստորադաս չեն: Թողարկողի լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջների բավարարման հերթականության մասին տեղեկատվությունը մանրակրկիտ ներկայացված է Ծրագրային ազդագրի 3.3.6 մասում/կետում: Ծրագրային ազդագրին կարելի է ծանոթանալ «Ամերիբանկ» ՓԲԸ ինտերնետային կայքում՝ <a href="http://www.ameribank.am">www.ameribank.am</a>
6.	Թողարկման արժույթը	ԱՄՆ դոլար
7.	Առաջարկի գինը	Պարտատոմսերի լրիվ գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց,

		<p>տեղաբաշխման առաջին օրվանից սկսած հաշվարկվում է հետևյալ կերպ՝</p> $DP = \frac{C}{f} \sum_{t=1}^N \frac{1}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{i-1+\tau}} + \frac{100}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{N-1+\tau}}$ <p>որտեղ՝</p> $\tau = \frac{DSN}{DCC}$ <p>DP - Պարտատոմսի գինն է,  DSN - գործարքի կատարման օրից (settlement/trade date) մինչև հաջորդ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,  DCC - գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,  f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է (4- եռամսյակային վճարումների համար),  N - հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը,  C - տարեկան արժեկտրոնը 100 միավոր անվանական արժեքի դիմաց,  Y - մինչև մարում եկամտաբերություն:</p> <p>Տեղաբաշխման ընթացքում պարտատոմսի լրիվ գինը յուրաքանչյուր օրվա համար հրապարակվում է Թողարկողի կայքում</p>
8.	Անվանական արժեքը	100 (մեկ հարյուր) դոլար
9.	Քանակը	200,000 (երկու հարյուր հազար) հատ
10.	Առաջարկի իրականացման սկիզբը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	2021թ. ապրիլ 12
11.	Առաջարկի իրականացման ավարտը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	2021թ. ապրիլ 30  Ընդ որում, եթե պարտատոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվում են մինչ այդ ամսաթիվը, ապա առաջարկի իրականացման ավարտի օր է հանդիսանում այն օրը, երբ վաճառվել է վերջին պարտատոմսը:
12.	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր	AMAMRBBM3ER9
13.	Թողարկման և տեղաբաշխման վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինը և որոշման ամսաթիվը	«Ամերիաբանկ» ՓԲԸ Տնօրենների Խորհրդի 2021թ. փետրվարի 5-ի թիվ 01-

	(լրացվում է այն դեպքում, եթե տվյալ հրապարակային առաջարկի համար առանձին որոշում է ընդունվել, հակառակ դեպքում նշվում է «ոչ կիրառելի»)	1/21/01 որոշում և «Ամերիաբանկ» ՓԲԸ Տնօրինության 2021թ. ապրիլի 5-ի թիվ 01/44/21 և 2021թ. ապրիլի 23-ի թիվ 01/51/21 որոշումների
<b>Արժեկտրոնի վերաբերյալ տեղեկություններ</b>		
14.	Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը	2021թ. ապրիլի 12
15.	Արժեկտրոնի տոկոսադրույքը և վճարման պարբերականությունը, եթե արժեկտրոնի տոկոսադրույքը լողացող է, ապա ներկայացնել տեղեկատվություն, թե ինչ ցուցանիշից (դրա փոփոխությունից) է կախված տոկոսադրույքի մեծությունը, և որտեղ կարելի է ստանալ այդ ցուցանիշի/դրա փոփոխության մասին տեղեկատվություն	4.5 % (չորս ամբողջ հինգ տասնորդական տոկոս) անվանական տոկոսադրույք և 3 (երեք) ամիս վճարման պարբերականությամբ
16.	Արժեկտրոնի վճարման հստակ օրերը (օր, ամիս, տարի)	12.07.2021 12.10.2021 12.01.2022 12.04.2022 12.07.2022 12.10.2022 12.01.2023 12.04.2023 12.07.2023 12.10.2023  Արժեկտրոնի վճարումները կատարվում են արժեկտրոնի հաշվարկման օրերին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ արժեկտրոնի հաշվարկման օրը ոչ աշխատանքային օր է. նման դեպքում արժեկտրոնը վճարվում է արժեկտրոնի հաշվարկման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:
17.	Արժեկտրոնի օրերի հաշվարկման կարգը (օրինակ 30/360, Act/Act, Act/360 և այլն)	Փաստացի օրեր արժեկտրոնի փուլի ընթացքում/Փաստացի օրեր տարվա ընթացքում (Actual/Actual)
18.	Լողացող արժեկտրոնի հաշվարկն իրականացնողը	ոչ կիրառելի
19.	Արժեկտրոնի հաշվարկման այլ էական պայմաններ	Վճարվող արժեկտրոնի մեծությունը որոշվում է տարեկան արժեկտրոնի մեծությունը բաժանելով տարվա ընթացքում արժեկտրոնների վճարման հաճախականության վրա:
20.	Զրոյական արժեկտրոնով (զեղչատոկոսային) արժեթղթերի վերաբերյալ դրույթ (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	ոչ կիրառելի
<b>Մայր գումարի մարման վերաբերյալ տեղեկություններ</b>		
21.	Մարման ժամկետը	2023թ. հոկտեմբերի 12  Պարտատոմսերի մարման գումարները պարտատոմսերի սեփականատերերին/անվանատերերին վճարվում են պարտատոմսերի մարման օրը: Եթե

		մարման օրը ոչ աշխատանքային օր է, ապա մարման գումարները վճարվում են մարման օրվան հաջորդող աշխատանքային օրը:
22.	Մարման արժեքը, եթե հնարավոր չէ, ապա նշվում է հաշվարկման մեթոդաբանությունը	100 (մեկ հարյուր) դոլար
23.	Մարման արժեքի փոփոխությունը (լրացվում է այն բոլոր պայմանները, որոնց դեպքում հնարավոր է մարման արժեքի փոփոխություն)	ոչ կիրառելի
24.	Վաղաժամկետ մարման հնարավորություն թողարկողի նախաձեռնությամբ/քոլ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	ոչ կիրառելի
	1) Ժամկետ(ներ)ը	
	2) Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),	
	3) Մասնակի մարման հնարավորության դեպքում՝ նվազագույն և առավելագույն մարման արժեքը	
	4) Այլ տեղեկություններ	
25.	Վաղաժամկետ մարման հնարավորություն ներդրողի նախաձեռնությամբ/փուֆ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	ոչ կիրառելի
	1) Ժամկետ(ներ)ը	
	2) Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),	
	3) Այլ տեղեկություններ (տեղեկացման ժամանակաշրջանը)	
<b>Տեղաբաշխման վերաբերյալ տեղեկություններ</b>		
26.	Տեղաբաշխողի անվանումը, գտնվելու վայրը	ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ 2 Վ. Սարգսյան փողոց, 0010, Երևան, ՀՀ
27.	Տեղաբաշխման այլ պայմաններ (որոնք ներառված չեն ազդագրում)	
<b>Այլ տեղեկություններ</b>		
28.	Տվյալ դասի արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության առկայություն (նշվում է համապատասխան կարգավորվող շուկաների անվանումները, թույլտվության ամսաթիվը)	Արժեթղթերը դեռևս թույլատրված չեն կարգավորվող շուկայում առևտրի
29.	Եթե առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն, ապա նշվում է տեղեկություններ այդ մասին (շուկայի անվանումը, նաև դրույթ, որ առևտրին թույլտվության հայցը կարող է չբավարարվել, առևտրին թույլտվության սպասվող ամսաթիվը (հնարավորության դեպքում))	Թողարկողը պարտադիր դիմելու է պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու համար, ընդ որում առևտրին թույլտվության հայցը կարող է չբավարարվել: Համաձայն ՀՀ գործող օրենսդրության՝ պարտատոմսերի ցուցակման դեպքում վերջիններիս հետագա շրջանառությունը կարող է իրականացվել միայն կարգավորվող շուկայում:

		Կարգավորվող շուկա ասելով Թողարկողը նկատի ունի «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲ ընկերությունը:
30.	Արժեթղթի վարկանիշը	Արժեթղթերը վարկանշված չեն
31.	Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեթղթերը ստանալու մեթոդները և ժամկետները, արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը	<p>Թողարկողի կողմից թողարկվող պարտատոմսերի ձեռքբերման համար իրավաբանական և/կամ ֆիզիկական անձիք վճարումը կատարում են թողարկման նպատակով «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ում բացված <b>1570043100494501</b> հատուկ հաշվեհամարին:</p> <p>Պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարումը պետք է կատարվի պարտատոմսերի ձեռքբերման յուրաքանչյուր հայտ-հանձնարարականի ներկայացման օրվա ընթացքում, սակայն ոչ ուշ քան նույն աշխատանքային օրվա 16:30-ը:</p> <p>Եթե համապատասխան գումարները վճարվում են տվյալ աշխատանքային օրվա 16:30-ից հետո, ապա դրանք ստացված են համարվում վճարման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը և պարտատոմսերը ձեռք են բերվում այդ օրվա գնով:</p> <p>Համապատասխան հայտ-հանձնարարականները բավարարվելուց հետո ներդրողներն արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք կարող են ստանալ իրենց արժեթղթերի հաշիվը սպասարկող Պահառուից կամ Հաշվի Օպերատորից՝ Թողարկողից իրենց հայտ-հանձնարարականների բավարարման մասին տեղեկացվելուց հետո:</p>

**Թողարկման վերջնական պայմաններ**

23.04.2021թ.

Ամերիաբանկ ՓԲԸ

անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային, ոչ փոխարկելի պարտատոմս

Թողարկողի և թողարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ձեռքբերման համար անհրաժեշտ է համատեղ դիտարկել Ծրագրային ազդագիրը (գրանցված է 19 մարտ 2021թ.), դրա լրացումները և սույն թողարկման վերջնական պայմանները: Ծրագրային ազդագիրը, դրա լրացումները գտնվում են ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ-ում 2 Վ. Սարգսյան փողոց, 0010, Երևան, ՀՀ հասցեում:

<p>Ընդհանուր տեղեկություններ (Այն տեղեկությունները, որոնք կիրառելի չեն, նշվում է «ոչ կիրառելի»: Եթե միևնույն սերիայի ներքո տարբեր հիմնական պայմաններով (թողարկման արժույթ, առաջարկի գին, անվանական արժեք և այլն) արժեթղթեր են թողարկվում, ապա յուրաքանչյուր պայմանին բավարարող արժեթղթերի խմբի համար տարբերվող պայմանները ներկայացվում են տարանջատված:)</p>		
1.	Թողարկողը (թողարկողի անվանումը)	“ԱՄԵՐԻԱԲԱՆԿ” ՓԲԸ
2.	Երաշխավորողը	Թողարկողը չի նախատեսում ներգրավել երաշխավորող:
3.	Սերիան (տվյալ ծրագրային ազդագրի հիման վրա իրականացվող հերթական թողարկման համարը և տարեթիվը)	Սերիա 3, 2021
4.	Տվյալ սերիայի թողարկման ընդհանուր ծավալը	15,000,000 (տասնհինգ միլիոն) դոլար Տվյալ տեղաբաշխման ժամանակահատվածում չտեղաբաշխված պարտատոմսերը կարող են տեղաբաշխվել թողարկման վերաբացման միջոցով
5.	Արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն՝ թողարկողի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (ստորադասությունը), ներառյալ՝ տվյալ սերիայի ներքո յուրաքանչյուր թողարկման ծավալը՝ ըստ ստորադասության	Պարտատոմսերը ստորադաս չեն: Թողարկողի լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջների բավարարման հերթականության մասին տեղեկատվությունը մանրակրկիտ ներկայացված է Ծրագրային ազդագրի 3.3.6 մասում/կետում: Ծրագրային ազդագրին կարելի է ծանոթանալ «Ամերիբանկ» ՓԲԸ ինտերնետային կայքում՝ <a href="http://www.ameribank.am">www.ameribank.am</a>
6.	Թողարկման արժույթը	ԱՄՆ դոլար
7.	Առաջարկի գինը	Պարտատոմսերի լրիվ գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց,

		<p>տեղաբաշխման առաջին օրվանից սկսած հաշվարկվում է հետևյալ կերպ՝</p> $DP = \frac{C}{f} \sum_{t=1}^N \frac{1}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{i-1+\tau}} + \frac{100}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{N-1+\tau}}$ <p>որտեղ՝</p> $\tau = \frac{DSN}{DCC}$ <p>DP - Պարտատոմսի գինն է,  DSN - գործարքի կատարման օրից (settlement/trade date) մինչև հաջորդ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,  DCC - գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,  f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է (4- եռամսյակային վճարումների համար),  N - հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը,  C - տարեկան արժեկտրոնը 100 միավոր անվանական արժեքի դիմաց,  Y - մինչև մարում եկամտաբերություն:</p> <p>Տեղաբաշխման ընթացքում պարտատոմսի լրիվ գինը յուրաքանչյուր օրվա համար հրապարակվում է Թողարկողի կայքում</p>
8.	Անվանական արժեքը	100 (մեկ հարյուր) դոլար
9.	Քանակը	150,000 (մեկ հարյուր հիսուն հազար) հատ
10.	Առաջարկի իրականացման սկիզբը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	2021թ. մայիս 03
11.	Առաջարկի իրականացման ավարտը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	2021թ. հուլիս 09  Ընդ որում, եթե պարտատոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվում են մինչ այդ ամսաթիվը, ապա առաջարկի իրականացման ավարտի օր է հանդիսանում այն օրը, երբ վաճառվել է վերջին պարտատոմսը:
12.	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր	[--- ]
13.	Թողարկման և տեղաբաշխման վերաբերյալ որոշում ընդունված իրավասու մարմինը և որոշման ամսաթիվը	«Ամերիաբանկ» ՓԲԸ Տնօրենների Խորհրդի 2021թ. փետրվարի 5-ի թիվ 01-







	(լրացվում է այն դեպքում, եթե տվյալ հրապարակային առաջարկի համար առանձին որոշում է ընդունվել, հակառակ դեպքում նշվում է «ոչ կիրառելի»)	1/21/01 որոշում և «Ամերիաբանկ» ՓԲԸ Տնօրինության 2021թ. ապրիլի 23-ի թիվ 01/51/21 որոշման
<b>Արժեկտրոնի վերաբերյալ տեղեկություններ</b>		
14.	Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը	2021թ. մայիս 03
15.	Արժեկտրոնի տոկոսադրույքը և վճարման պարբերականությունը, եթե արժեկտրոնի տոկոսադրույքը լողացող է, ապա ներկայացնել տեղեկատվություն, թե ինչ ցուցանիշից (դրա փոփոխությունից) է կախված տոկոսադրույքի մեծությունը, և որտեղ կարելի է ստանալ այդ ցուցանիշի/դրա փոփոխության մասին տեղեկատվություն	4% (չորս տոկոս) անվանական տոկոսադրույք և 3 (երեք) ամիս վճարման պարբերականությամբ
16.	Արժեկտրոնի վճարման հստակ օրերը (օր, ամիս, տարի)	03.08.21 03.11.21 03.02.22 03.05.22 03.08.22 03.11.22 03.02.23 03.05.23 03.08.23  Արժեկտրոնի վճարումները կատարվում են արժեկտրոնի հաշվարկման օրերին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ արժեկտրոնի հաշվարկման օրը ոչ աշխատանքային օր է. նման դեպքում արժեկտրոնը վճարվում է արժեկտրոնի հաշվարկման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:
17.	Արժեկտրոնի օրերի հաշվարկման կարգը (օրինակ 30/360, Act/Act, Act/360 և այլն)	Փաստացի օրեր արժեկտրոնի փուլի ընթացքում/Փաստացի օրեր տարվա ընթացքում (Actual/Actual)
18.	Լողացող արժեկտրոնի հաշվարկն իրականացնողը	ոչ կիրառելի
19.	Արժեկտրոնի հաշվարկման այլ էական պայմաններ	Վճարվող արժեկտրոնի մեծությունը որոշվում է տարեկան արժեկտրոնի մեծությունը բաժանելով տարվա ընթացքում արժեկտրոնների վճարման հաճախականության վրա:
20.	Զրոյական արժեկտրոնով (զեղչատոկոսային) արժեթղթերի վերաբերյալ դրույթ (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	ոչ կիրառելի
<b>Մայր գումարի մարման վերաբերյալ տեղեկություններ</b>		
21.	Մարման ժամկետը	2023թ. օգոստոս 03  Պարտատոմսերի մարման գումարները պարտատոմսերի սեփականատերերին/անվանատերերին վճարվում են պարտատոմսերի մարման օրը: Եթե մարման օրը ոչ աշխատանքային օր է,




		ապա մարման գումարները վճարվում են մարման օրվան հաջորդող աշխատանքային օրը:
22.	Մարման արժեքը, եթե հնարավոր չէ, ապա նշվում է հաշվարկման մեթոդաբանությունը	100 (մեկ հարյուր) դոլար
23.	Մարման արժեքի փոփոխությունը (լրացվում է այն բոլոր պայմանները, որոնց դեպքում հնարավոր է մարման արժեքի փոփոխություն)	ոչ կիրառելի
24.	Վաղաժամկետ մարման հնարավորություն թողարկողի նախաձեռնությամբ/քոլ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	ոչ կիրառելի
	1) Ժամկետ(ներ)ը	
	2) Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),	
	3) Մասնակի մարման հնարավորության դեպքում՝ նվազագույն և առավելագույն մարման արժեքը	
	4) Այլ տեղեկություններ	
25.	Վաղաժամկետ մարման հնարավորություն ներդրողի նախաձեռնությամբ/փուֆ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	ոչ կիրառելի
	1) Ժամկետ(ներ)ը	
	2) Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),	
	3) Այլ տեղեկություններ (տեղեկացման ժամանակաշրջանը)	
<b>Տեղաբաշխման վերաբերյալ տեղեկություններ</b>		
26.	Տեղաբաշխողի անվանումը, գտնվելու վայրը	ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ 2 Վ. Սարգսյան փողոց, 0010, Երևան, ՀՀ
27.	Տեղաբաշխման այլ պայմաններ (որոնք ներառված չեն ազդագրում)	
<b>Այլ տեղեկություններ</b>		
28.	Տվյալ դասի արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության առկայություն (նշվում է համապատասխան կարգավորվող շուկաների անվանումները, թույլտվության ամսաթիվը)	Արժեթղթերը դեռևս թույլատրված չեն կարգավորվող շուկայում առևտրի
29.	Եթե առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն, ապա նշվում է տեղեկություններ այդ մասին (շուկայի անվանումը, նաև դրույթ, որ առևտրին թույլտվության հայցը կարող է չբավարարվել, առևտրին թույլտվության սպասվող ամսաթիվը (հնարավորության դեպքում))	Թողարկողը պարտադիր դիմելու է պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու համար, ընդ որում առևտրին թույլտվության հայցը կարող է չբավարարվել: Համաձայն ՀՀ գործող օրենսդրության՝ պարտատոմսերի ցուցակման դեպքում վերջիններիս հետագա շրջանառությունը կարող է իրականացվել միայն կարգավորվող շուկայում:

		Կարգավորվող շուկա ասելով Թողարկողը նկատի ունի «Հայաստաի ֆոնդային բորսա» ԲԲ ընկերությունը:
30.	Արժեթղթի վարկանիշը	Արժեթղթերը վարկանշված չեն
31.	Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեթղթերը ստանալու մեթոդները և ժամկետները, արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը	<p>Թողարկողի կողմից թողարկվող պարտատոմսերի ձեռքբերման համար իրավաբանական և/կամ ֆիզիկական անձիք վճարումը կատարում են թողարկման նպատակով «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ում բացված <b>1570043100494501</b> հատուկ հաշվեհամարին:</p> <p>Պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարումը պետք է կատարվի պարտատոմսերի ձեռքբերման յուրաքանչյուր հայտ-հանձնարարականի ներկայացման օրվա ընթացքում, սակայն ոչ ուշ քան նույն աշխատանքային օրվա 16:30-ը:</p> <p>Եթե համապատասխան գումարները վճարվում են տվյալ աշխատանքային օրվա 16:30-ից հետո, ապա դրանք ստացված են համարվում վճարման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը և պարտատոմսերը ձեռք են բերվում այդ օրվա գնով:</p> <p>Համապատասխան հայտ-հանձնարարականները բավարարվելուց հետո ներդրողներն արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք կարող են ստանալ իրենց արժեթղթերի հաշիվը սպասարկող Պահառուից կամ Հաշվի Օպերատորից՝ Թողարկողից իրենց հայտ-հանձնարարականների բավարարման մասին տեղեկացվելուց հետո:</p>

Թողարկողը պատասխանատու է սույն «Թողարկման վերջնական պայմաններում» ներառված տեղեկությունների համար: Թողարկողը հավաստիացնում է, որ սույն փաստաթղթում ներառված տեղեկությունները համապատասխանում են այն տեղեկություններին (ներկայացված ընդհանուր մեթոդաբանությանը), որոնք ներառված են ծրագրային ազդագրում, դրա լրացումներում, ինչպես նաև ճշգրիտ են (այնքանով, որքանով հայտնի են), և որևէ փաստ բաց չի թողնվել կամ խեղաթուրվել:

Արման Բարսեղյան (անուն, ազգանուն)	Տնօրինության նախագահ - գլխավոր տնօրենի ժ/պ, Մանրածախ բանկինգի տնօրեն (պաշտոն)	 (ստորագրություն)	26.04.21 (ամսաթիվ)
Գևորգ Թառումյան (անուն, ազգանուն)	Տնօրինության անդամ, Գլխավոր տնօրենի տեղակալ, Ֆինանսական գծով տնօրեն (պաշտոն)	 (ստորագրություն)	26.04.21 (ամսաթիվ)
Գագիկ Սահակյան (անուն, ազգանուն)	Տնօրինության անդամ, Կորպորատիվ և ներդրումային բանկինգի գծով տնօրեն (պաշտոն)	 (ստորագրություն)	26.04.21 (ամսաթիվ)
Անդրանիկ Բարսեղյան (անուն, ազգանուն)	Տնօրինության անդամ, Ռիսկերի կառավարման գծով տնօրեն (պաշտոն)	 (ստորագրություն)	26.04.21 (ամսաթիվ)
Էդգար Մանուկյան (անուն, ազգանուն)	Տնօրինության անդամի ժ/պ (պաշտոն)	 (ստորագրություն)	26.04.21 (ամսաթիվ)
Գոհար Խաչատրյան (անուն, ազգանուն)	Տնօրինության անդամ, Գլխավոր հաշվապահ (պաշտոն)	 (ստորագրություն)	26.04.21 (ամսաթիվ)

Ստորագրությունները հավաստում են՝

Արման Բարսեղյան (անուն, ազգանուն)	Տնօրինության նախագահ - գլխավոր տնօրենի ժ/պ, Մանրածախ բանկինգի տնօրեն (պաշտոն)	 (ստորագրություն)	26.04.21 (ամսաթիվ)
--------------------------------------	--	---	-----------------------

